## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

### 27.01.2023թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-23/01-2 «Պետության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքերի նորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «17» « 11 » 2023 թ.

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Գահնապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Այ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մանվելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը և 27.01.2023թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-23/01-2 «Պետության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքերի նորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի 4.1 կետում նշված գինն ավելացնել 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամով:

Պայմանագրի N 2 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

1.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայությունների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Համաձայնագրի պայմանները (պայմանագրի) կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ | «Այ Սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24 | ք. Երևան, Հ. Հակոբյան 3/14 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900018005588 | Հ/Հ 2050022367711001 |
| ՀՎՀՀ 01836525 | ՀՎՀՀ 00124361 |
| ----------------- Ա. Գահնապետյան | ----------------- Հ. Մանվելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
<<17>> << 11 >> 2023 թ. կնքված
N 2 Համաձայնագրի
<< Հավելված 2
<<27>> 01. 2023 թ. կնքված
N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-23/01-2 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայությունների | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Հոդված | Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 3 | 50321100/1 | Անձնական համակարգիչների վերանորոգում | 4252 | - | - | - | - | - | 400 000 | 400 000 | 400 000 | 800 000 | 800 000 | 880 000 | 880 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525

Ա. Գպինաչետյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Այ Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Հ. Հակոբյան 3/14
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022367711001
ՀՎՀՀ 00124361

Մանվելյան
(ստորագրություն)
Կ.Տ